քարիայի գործակալն էր (արձ. 59)։ Այս Վաչեն վանքին նվիրել է նաև ոսկեռուի ձեռագիր ավետարան, մի խաչ և գործք (առաքելոց)։

Մեծ գավիթը կառուցված է Աստվածածնա արևմտյան և ներքին գավիթի հյուսիսային պատերին կից։ Սա հարավից դեպի հյուսիս մի քիչ ձգված ուղղանկյուն քառանկյունի շենք է, որ արևելքից արևմուտք գնացող երկու շարք մասսիվ սյունաշարքով բաժանված է միմյանց հավասար երեք թևի և ամեն մի թևն առանձին ծածկված է երկթեք սալածածկ տանիքով։ Իր այս տիպով եզակի օրինակ է հայկական գավիթների մեջ և, ամենայն հավանականությամբ, կապվում է աշխարհիկ պալատական սյունազարդ դահլիճների հետ, որոնց օրինակները մեզ չեն հասել։ Կառուցող վարպետները հայտնի չեն, հետաքրքիրն այն է, որ շինության արձանագրության մեջ այս գավիթը կոչվել է խորան։



Նկ. 8. Ներքին ժամատան հս մուտքը և կենտրոնական սյուներից մեկը մեծ ժամատան միջից։

Իր գոյության ընթացքում նշանակալից նորոգություններ չի ենթարկվել և վանքին ծառայել է իբրև գլխավոր տապանատուն։ Այդ պատճառով էլ հատակը ծածկված է հարթ տապանաքարերով։

5. Մագիստրոսի ճեմարան։ Այս շենքը հատուկ նպատակով չի կառուցված, այլ ինքնաբերաբար առաջացել է Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիներն իրար կողքի, բայց միմյանցից մոտ 4 մետր հեռու շինելու հետևանքով, նրանց արանքում։ Այդ երևում է այն բանից, որ այս սրահի համար առանձին պատեր չեն կառուցել, այլ օգտագործել են երկու եկեղեցիների պատերը, նրանց կողքին շինելով որմնասյուներ, որոնց վրա դրել են սրահի թաղակապ ծածկը։ Այժմ էլ եկեղեցիների պատերը երևում են սրահի որմնասյուների արանքում։ Ամենափրկիչ եկեղեցու հյուսիսային մուտքի մեծ մասն իր զարդարուն ճակատով մնացել է այս սրահի որմնասյուների տակ։

Այս «ճեմարանը» երկու եկեղեցիների արանքում արևելքից դեպի արևմուտք ձգված մի նեղ սրահ է, որի «Մագիստրոսի ճեմարան» անունը գրավոր չի հիշատակված, այլ վանքի միաբաններն այդպես են կոչել ավանդաբար։

Թեև իր վրա կառուցման վերաբերող կամ այլ բովանդակությամբ հին արձանագրություն չունի, բայց, ամենայն հավանա-